

սին եղած տեղեկութիւնները, այլև հիմնուելով ձեռագիրների յիշատակարանների, գերեզմանների և եկեղեցիների արձանագրութիւնների վերայ, կարգաւորում է իշխանական տոհմերի ցեղաբանութիւնը, որոշում է նոցա տիրապետած երկիրներն ու դէպի այլ և այլ գաւառներ եղած գաղթականութիւնները:

Դրքիս վերջին երկու հատուածներով հեղինակը նկարագրում է Աղուանից և Սիւնեաց երկրում կարճատև կեանք ունեցող փոքրիկ, գաւառական թագաւորութիւնների ծագումն ու անկումը, և վերջապէս նոցա մնացորդ իշխանութիւնները ԺԳ. և ԺԴ. դարերում: Առանշահիկ տոհմից ծագում են Ծարի, Դարբանդի, Հաթերբի և Դիզակի Տումի թագաւորութիւնները՝ Սիւնիքում Բաղաց թագաւորութիւնը, իսկ Զորագետում և Տաւուշում Բադրատունի Կիւրիկեանց թագաւորութիւնը: Նա իւր գործը վերջացնում է Լանկ-Թամուրի արշաւանքներով և Օսմանեանց ծագման պատմութեամբ, Բ. հատորի համար պահելով մելիքների պատմութիւնը: Դրքի վերջում յատուկ անունների ցանկ է կցուած և Աղուանից երկրի քարտէզը:

Ի սրտէ յաջողութիւն ենը ցանկանում մտադրեալ գործը գլուխ հանելու համար:

Գ. Ա. Յովսէփեան.

ՔՈՒԶԱԿ ՆԱՀԱՊԵՏԻ ԵՐԳԵՐԻ ՄԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ԱՌԹԻԻ:

«Քուչակ Նահապետի երգերը» վերնագրով մեր փոքրիկ աշխատութեան մէջ * այն միտքն էլնք յայտնել, թէ միջնադարեան այս ընտիր երգչի առանց այն էլ գեղեցիկ երգերի վարկը թերևս աւելի ըարձրանայ, եթէ կարելի լինի վերականգնել այդ երգերը

* Լումայ, 1902. յուլիս—օգոստոս, էջ 208 չ.

սկզբնական ձևը, մանրամասն եթէ դանդաղեան և խմբագրուեն Նահապետի միւս՝ մեր ձեռքը չհասած, երգերը: Այսօր ուրախութեամբ տեսնում ենք, որ մեր այդ ցանկութիւնը, թէ և պատահաբար՝ իրականացած է մասամբ. նորերս պ. Արշակ Զօպանեան Փարիզում «Նահապետ Քուչակի դիւանը» խորագրով մի գրքոյկ հրատարակեց, դնելով նրա մէջ Քուչակին վերագրուած երգերի մի երկար խմբագրութիւն: Քուչակի այդ երգերը պ. Զօպ. քաղել է Ս. Ղազարի և Փարիզի Ազգ. Մատենադարանի գրչագիրների երկու ձեռագիրներից, Լ. Տեհանցի «Հայերգից» և պ. Կոստանեանցի հրատարակած միջնագրեան երգերից: Քուչակի երգերի ժողովածուի իր այդ հրատարակութեանը պ. Զօպ. կցել է նաև մի «քննական ուսումնասիրութիւն», որի սկզբում փորձում է եզրակացութեան դալ այն մասին՝ թէ արդեօք Քուչակին վերագրած տաղերը բոլորն էլ մի մարդու գործ են, թէ տարբեր մարդոց կամ ժողովրդական ոգու արդիւնք. սակայն մի վերջնական եզրակացութեան չի գալիս, այլ հաւանականութեամբ միայն այդ տաղերի մեծ մասը Քուչակին է վերագրում: Նկատելու արժանի մի բան ևս այստեղ այն է, որ թէ ս. Ղազարի և թէ Փարիզի Ազգ. Մատենադարանի այն երկու ձեռագիրները, որոնցից պ. Զօպ. հանել է այդ տաղերը, տաղերի սկզբում կամ վերջում չեն ունեցել որ և է յիշատակութիւն կամ վերնագիր, որից երևար հաստատապէս, թէ այդ տաղերը Քուչակինն են, չնայած որ մեծ նմանութիւն ունեցող շատ շատ տներ ունեն «Հայերգի» մէջ հրատարակուած 733 երկար տողերով այն ընդարձակ ոտանաւորի հետ, որը Տեհանց հաստատապէս Նահապետ Քուչակի ինքնատիպ գործն է համարում: Այստեղ էլ սակայն աչքի է ընկնում այն հանգամանքը, որ Լ. Տեհանց իր գրքի յառաջաբանում միայն, այն ևս միայն իւր կողմից, ասում է, թէ իր հրատարակած «Այս ծովական դիշերս» . . . երգը Նահապետ վարպետ Քուչակինն է. բայց թէ ի՞նչ փաստ է ունեցել ձեռքին, կամ արդեօք երգի կամ ձեռագրի յիշատակարանում է այդպէս ասուած եղել—չի յայտնում: Վերջնական մի բան ասել այն մասին, թէ արդեօք այդ բոլոր երգերը Քուչակ Նահապետինն են կամ ոչ, յիշուի շատ դժուար է և կանուխ: Դժուար է, որովհետև բանասիրական լուրջ և զիտական ուսումնասիրութիւն այս երգերի մասին դեռ չէ կատարուած, և կանուխ է, որովհետև Քուչակի երգերի մի լրիւ, ամբողջական հրատարակութիւն դեռ չէ եղած, որի մէջ գիտնականօրէն ճշտուած և հաստատապէս վերագրուած լինէր Քուչակին այն, ինչ որ նրանը կարող էր լինել: Եւ այս տեսակէտից պ. Զօպ.-ի ժողովածուն կարելի է ասել, եթէ ոչ բո-

լորովին խաղի դոնէ բաւական թերի մի դործ է, չնայած որ ինքն իբրեւ մի ամբողջութիւն է նկատուած այն և իբրեւ «սոփիւման» մը, զոր առաջին անգամ ըլլալով, իր ամբողջութեանը մէջ, ի լոյս է լնծայում:—Ամբողջական չենք համարուած այդ ժողովածուն, որովհետեւ դրա մէջ չեն մտած Վիեննայի Միօթարեան միաբանութեան (Տաշեան, Հայ. գր. ցուցակ. էջ 792. ա. 6, 795. բ. 11, և այլն) և ու եջմիածնի ձեռագրատան տաղարանների հայրենի կարգով՝ դրած տաղերը և այնպիսիները, որոնք թէև վերնագիր չունեն, բայց Քուչակի երգերին նման շատ տներ ունեն, նոյնպէս հաստատ աղբիւրից գիտենք, որ Վանում, և աւելի շատ Կոնստանպուլում, գտնուում են տաղարանների հարուստ ժողովածուներ, որոնց մէջ կան այսպէս՝ հայրենի կարգով, գրուած շատ տաղեր, հաստատապէս Քուչակի անձին (գուցէ և գրչին) պատկանող: Մենք յոյս ունենք ստանալ այնտեղից այդ երգերի ընդօրինակութիւնները և հանգամանքներին նայած հրատարակել, կամ այդ մասին մի բան ասել: Եւ ահա, երբ կարելի կլինի պ. Զօպ.-ի ժողովածուին աւելացնել մեր յիշածները, գուցէ և ուրիշները,—այն ժամանակ միայն կարող ենք ասել, թէ ունենք Քուչակի կամ նրան վերագրուած երգերի մի ընդհանուր, ամբողջական ժողովածու: Սակայն այս խորհրդածութիւնն անելով, մենք յաւակնութիւն չունենք պ. Զօպ.-ի գործի արժէքն ու բանալու:

Իր գրքի սկզբում պ. Զօպ. «ապշեցուցիչ բան մըն» է համարում այն հանգամանքը, որ Քուչակի անունը և երգերը մինչև այժմ անծանօթ են մնացել ոչ միայն մեր ժողովրդին, «այլ և նոյն իսկ մեր գրագէտներուն»: մինչդեռ արդէն 1882 թուից Քուչակի երգերը ժողովրդի ձեռքն են տրուած և այդ երգերի ինչ լինելը 10 տարուց աւելի յայտնի է՝ մեր գրական դէմքերից, պ. Կ. Կոստանեանին, պ. Մ. Աբեղեանին և Շնորհ. Միաբանին: Աւելին կասենք. դոցանից պ. Մ. Աբեղեան տարիներ առաջ ոչ միայն Քուչակի՝ Հայոց գրականութեան այդ ընտիր ներկայացուցչի, երգերի մանրամասն վերլուծութիւնն է արել, այլ և, իբրեւ առաջինը մեր մէջ, այդ երգերի այսպէս կոչուած հայերէն կամ անտունի տաղաչափութեան առանձնայատկութիւններն է որոշել և ուսումնասիրել՝ մի տաղաչափութիւն, որ հիմնուած լինելով ոչ թէ վանկական, այլ ձայնական հիմունքների վրայ, մի եզակի երևոյթ է հանդիսանում Հայոց բանաստեղծութեան պատմութեան մէջ ¹:

¹ Առթից օգուտ քաղելով, անհրաժեշտ եմ համարում

Իր ուսումնասիրութեան մէջ պ. Զօպ. Քուչակի ով կամ ինչ լինելու մասին նոր բան չաւելացնելով, կանգ է առնում Նահապետի «քուչակ» մականունան բացատրութեան վրայ և նկատում, որ այդ բառը «քէօչէկ բառին աղաւաղումն է, որ երգիչ, նուագածու պարող կնշանակէ», իսկ մեր բացատրութիւնը, թէ քուչակ բառը տաճկերէն փլչիլի բառն է, որ կարճ է նշանակում, հետեւապէս և Նահապետը գուցէ մի կարճ մարդ է եղել և դրա համար այդպէս կոչուել,—անճիշտ համարում: Հարկաւ այս բառի բացատրութիւնը կրկին լուսաբանութեան կարօտ է: Պ. Զօպ.-ի բացատրութիւնը աւելի հաւանականութիւն է պարունակում, բայց որ մեր բացատրութիւնն էլ զուրկ չէ որ և է հաստատ հիմունքից,—դրան ապացոյց կարող է ծառայել Նահապետի մասին եղած հետեւեալ ժողովրդական պատմուածքը, որը անշուշտ իրականութեան հետք ունի իր մէջ: Ահա այդ պատմուածքը:

Ք. Նահապետը Վանի շրջակայքում յայտնի էր աշըղ Զիչակ անունով: Նա ունեցել է մի քոյր (անունը չկայ), որը բանաստեղծական և աշուղական ձիրքերով եղբօրից աւելի է օժտուած լինում: Աշըղ Զիչակի անունը և հռչակը հասել էր ամէն տեղ և ամէնքը նրանով հետաքրքրուում էին: Ստամբուլի Սուլթան—Մուրատին հասնելով Զիչակի հռչակը, հրամայում է իսկոյն կանչել տալ նրան իր մօտ, որպէս զի տեսնէ, արդեօք արժանի՞ է այդ հռչակին թէ ոչ: Հրամանը հասնում է Զիչակին, սա էլ ճանապարհ է ընկնում: Ճանապարհին պատահում է մի քանի հովիւներին, որոնք ոտանաւորով մի հանելուկ են առաջարկում մեր Զիչակին. սակայն Զիչակ չի կարողանում լուծել և ամօթահարու տխուր տուն է դառնում և այլ ևս չի ուղում գնալ Սուլթանի մօտ: Քոյրը տեսնում է, որ եղբայրը տխուր է, հետաքրքրուում է պատճառի մասին, և թէ ինչո՞ւ չի գնում Ստամբուլ: Զիչակ ստիպուած պատմում է հովիւների իրեն առաջարկած հանելուկը, որը սակայն շուտով և գեղեցիկ կերպով լուծում

այստեղ յայտնել որ՝ ա) իմ «Քուչակ Նահապետի երգերը» աշխատութեան մէջ գրած Քուչակի երգերի տաղաչափութեան, ինչպէս և այդ երգերի՝ Ակնայ ու Վանայ ժողովրդական երգերի հետ ունեցած նմանութեան մասին առաջին անգամ լսել եմ պ. Մ. Աբեղեանից, ցաւում եմ որ այս մասին ինձնից անկախ պատճառներով հնարաւորութիւն չունեցայ իր տեղում յայտնելու: Բ) իմ այդ աշխատութիւնը 1901 թ. Ապրիլի 20-ին կարդացել եմ պ. Մ. Աբեղեանի Նախագահութեամբ կազմուած Գ. Ճեմարանի ուսանողական դրական ժողովում և յետոյ միայն մի քանի փոփոխութիւններով հրատարակութեան յանձնել:

է քայրը, սովորեցնում եղբօրը և յորդորում նորից ճանապարհ ընկնել դէպի Ստամբուլ: Զիշակի գնում է. ճանապարհին կրկին հանդիպում է նոյն հովիւներին, լուծում է նրանց հանելուկը և շարունակելով ճանապարհը հասնում է Ստամբուլ: Նրա դալը խսկոյն իմանում են Սուլթանի աշուղները և շտապում են դալ տեսնել թէ ինչ տեսակ մարդ է: Որ այդքան դուրում են: Պալիս և տեսնում են: Որ աշըղ Զիշակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կարգ, փոքրիկ, sâle եւ անցնորհի (ըստ արտաքինի) մարդ: Ուստի առում են՝ «Սա ոչ թէ չիշակ (ծաղիկ պէս գեղեցիկ) մարդ է, այլ մի ֆեօշէկ մարդ է. որա հետ խօսել և մրցել չարժէ էլ»¹⁾: Այս վերաւորանքին Զիշակը պատասխանում է վերաւորանքով: Քիչ յետոյ Զիշակի ներկայանում է Սուլթան—Մուրատին և նրա ներկայութեամբ մրցում նրա աշուղներին հետ ու յաղթում: Սուլթանը ի վարձատրութիւն նուիրում է Զիշակին մի թանկագին շալ, որ դլխին կապէ. սակայն Զիշակ՝ Սուլթանի մօտից ելնելով, նրա նուիրած շալը ոչ թէ գլխին է կապում այլ փորին: Զիշակի Իւսկիւտարը անցնելու միջոցին Սուլթանի աշուղները նկատում են այդ բանը և դալիս Սուլթանի մօտ ամբաստանում են Զիշակին, ասելով թէ՝ քո արքայական նուէրը Զիշակը ոչ թէ գլխին է կապել, այլ անպատուելով կապել է իր «փորէց ցած»: Սուլթան Մուրատը զայրանում է և նորից մօտը կանչելով Զիշակին, բացատրութիւն է պահանջում. Զիշակն էլ պատասխանում է. «Եթէ գլխիս վրայ կապէի քո նուէրը, ես չէի կարող միշտ նայել նրա վրայ, այլ ուրիշները պիտի տեսնէին. ուստի սրտիս վրայ կապեցի, որ միշտ վրան նայեմ»: Սուլթան Մուրատը խիստ հաւանելով Զիշակի այս պատասխանին՝ պատուիրում է մի ուրիշ նուէր էլ տալ նրան, որը ստանալուց յետոյ Զիշակ տուն է դառնում²⁾:

1 Քէօշէկ բառը տաճկերէն է. այսպէս էլն կոչուում այն տղաները կամ պատանիները, որոնք պահուում էին խանի կամ փաշայի ապարանքում և նոցա մանկլաւիկը կամ պաժն էլն, իրենց տէրերի զուարճացնողները երգերով և ըն: Ահա այս կէտի վրայ հիմնուելով Սուլթան Մուրատի աշուղները նախանձից Զիշակին քէօշէկ են անուանում, վերաւորական իմաստով:

2 Այս պատմութիւնը ինձ պատմեց պ. Ս. Հայկունին, որ բաղել էր ժողովրդական կենդանի աղբիւրից: Պ. Հայկունին յիշում էր մօտաւորապէս. բուն նիւթը ժողովրդական բարբառով նա ուղարկել է Մոսկուա, ուր իւր ժամանակին կտպագրուի Իմինեան աղագրական ժողովածուի մէջ: Պատմութեան մէջ եղած թէ հանելուկը, թէ Սուլթանի աշուղները և թէ Զիշակի երգերը տաճկերէն են, — վերջինները ոչ մաքուր բովանդակութեամբ:

Արդ՝ ինչպէս երևում է այս պատմութեան, քննել, և այդտեղից էլ աղաւաղուած փուչակ բառը նահապետի թէ երգիչ լինելու և թէ նրա հասակի կարծութեան և տղեղութեան մասին գաղափար և աւանդութիւն պարունակում է: Դժուար է ասել երկու նշանակութիւններից որն է ճիշտ և որը սխալ. մեղ երկուսն էլ հաւանական է թուում: Կարծում ենք՝ այս տեսակ պատմութիւններ Վանայ շրջակայքի ժողովրդի մէջ շատ պիտի լինեն, որոնք մեծ լոյս կարող են սփռել մեր այս անգուգական երգչի՝ Քուչակի նահապետի բաւական անյայտ և մութ մնացած կենսագրականի վրայ:

Պ. Զօպ. ըստ արժանւոյն գնահատել է Քուչակի երգերի սիրային մասը և արժանիքին համեմատ գովել ու դրուատել: Ցաւում ենք միայն, որ նորա ժողովածուի մէջ զարձեալ չգտանք Քուչակի երգերից գոնէ մի տուն, որ դրուատէր կնոջ ոչ թէ արտաքին գեղեցկութիւնը, այլ ներքին գեղեցկութիւնը, արժանիքը, որով մեր երգչի սիրային երգերի վարկը շատ աւելի կբարձրանար:

Իր ուսումնասիրութեան մէջ պ. Զօպ. տարուելով Քուչակի սիրային երգերի գեղեցկութեամբ, չափազանցութեան մէջ է ընկնում և հետեւեալ սխալ բացատրութիւնը տալիս. «Ուրիշ քառեակի մը մէջ՝ ոսկի ամբողջ (?)՝ բանաստեղծը բացէ ի բաց կ'ըսէ իր հախարութիւնը կրօնքի պաշտօնական դերասաններուն հանդէպ, և իր նախասիրութիւնը սիրոյ կրօնքին և և անոր պաշտելի քրմահիններուն համար».

— Քանի մարն զիս ըբերեր, քահանի չեմ խոստովաներ.

Ուրտեղ քահանայ տեսեր, նա ծռեր ճամբուս ու ելեր ...
և ին—(էջ 32):

Պ. Զօպ. այս տան գեղարուեստական կազմութիւնը չի հասկացել: Ինչ որ այստեղ քահանայի և խոստովանութեան մասին ասած է, ոչ թէ իբր գաղափար կամ սկզբունք պիտի ընդունել, այլ իբրև մի փոքրիկ միևնառու պատկեր, վերցրած երականութիւնից և դրա հետ գեղեցիկ կերպով համեմատած սիրոյ զգացումը: Այդպէս են անում այժմեան ժողովրդական երգերի բոլոր հեղինակներն իրենց սիրային երգերում. նոքա վերցնում են բնութեան կամ մարդոց կենցաղական նկարագրից մի փոքրիկ պատկեր և դրան յարմարեցնում այն, ինչ որ ուզում են ասել: Այդպէս է արել նաև Քուչակը. վերցրել է իրականութիւնից քահանային խոստովանելու պատկերը և դրան յարմարեցրել իւր սիրոյ պատկերը¹:

¹ Իսկ եթէ պ. Զօպ.-ի պէս հասկանանք այդ տողերը, ապա էջ 65-ի ճԺԱ տան տողերը ինչպէս հաշտեցնենք դրանց հետ:

Այնուհետև պ. Զօպ. ևս նկատում է Քուչակի մի տուն երգի և նարեկացու ողբի մի կտորի մէջ եղած նմանութիւնը, քացատրում «Հայերէն ասելու» դարձուածը և Քուչակի երգերից մի տան («Գաբրիէլ իջեալ յերկնից»...) իբրև ոչ Քուչակին պատկանելու հանգամանքը, — մի քան, որ առաջուց արդէն նկատել է պ. Կոստանեան, քայց պ. Զօպ. այս մասին լռութեամբ է անցնում (Համեմատել Զօպ. 20, 11 և Կոստ. Նոր. Ժող. I. 73, 75): Սակայն տարօրինակն այն է, որ պ. Զօպ. իր գրքի վերջի մի յետ ընկած երեսում (117) ստիպուում է այդ խնդիրներին նկատմամբ յիշել պ. Կոստանեանի անունը, քայց ահա թէ ինչպէս. «Պ. Կոստանեան կյայտնէ կտրծիքմը որ կնմանի մեր յայտնած կարծիքին» և ինչ:—Արդեօք այդպէս, թէ հակառակը:—Ահա սարակ մենք չհասկացանք, թէ պ. Զօպանեանի գրքի՝ երգերի խմբագրութիւնից յետոյ եկող, 115—118 երեսում եղած, առանց վերնագրի մի քանի խօսքը իբրև ինչ է դրուել գրքի վերջում: Եթէ այդ ևս Քուչակի երգերի մասին ուսումնասիրութեան մի կտոր է, այն ժամանակ ինչո՞ւ չի դրուած գրքի սկզբում «Ճննական ուսումնասիրութեան» մէջ. իսկ եթէ ծանօթութիւն է, այն ժամանակ ինչո՞ւ «ծանօթագրութիւններից» դուրս է մնացել և առաջին ծանօթութիւնը դրուած է այդ մի քանի խօսքից յետոյ միայն:

Իբրև յաւելուած մեր ասածների՝ կգնենք այստեղ Մայր Աթոռի ձեռագրատան № 283 տաղարանից (թղ. 16^ա—20^ա) հաշած Պիւլպիւլ վարդապետի մի տաղը, որի մէջ 10, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 23-րդ տները գրեթէ նոյնութեամբ կան պ. Զօպ.-ի Քուչակին վերագրած տաղերում, չնայած որ նոյն այդ տներից մի քանիսը գտնուում են նաև ուրիշ երգիչների տաղերում, ինչպէս գտել է պ. Զօպ.: Մեզ այնպէս է թուում, որ Պիւլպիւլ վարդապետը անգիր անելով Քուչակի շատ երգերը, շատ քան նրանից վերցրել և իրենի մէջ է խառնել: Այդպէս ենք կարծում նաև այն երգիչների նկատմամբ, որոնք նման շատ տներ ունեն Քուչակի երգերից: Եւ այս շատ հաւանական է, որովհետև Քուչակի կարճ, դեղեցիկ և արտայայտիչ երգերը տարածուելով, կարճ ժամանակի ընթացքում կարող էին ընդհանուրի սեպհականութիւն դառնալ, և հետագաները կարող էին երգել խառն ի խուռն, առանց այն մասին մտածելու, թէ ումն է պատկանում իրենց երգածի (կամ գրածի՝ եթէ երգիչը գրագէտ է) այսինչ կամ այնինչ տունը: Պիւլպիւլ վարդապետի տա-

դը դնում ենք ամբողջապէս. դուցէ՛ յետոյ՝ դտնուեն Գուչակի ուրիշ երգերը, որոնք այս երգի մէջ նման նոր տներ ունենան:

Տաղ Աղամայ, Պիւլպիւլ վարդապետէ ասացեալ.

1. Մեր տէրն ի դրախտն երեկ,
յադամայ ձայնեց թէ՛ ո՛ւր ես.
ադամ ըզդրախտէն ի դուրս
զայս ասաց թէ՛ մերկիկ եմ ես:

2. Իմ տէր ես քեզնէ կուղեմ,
որ զեւայ ու զաւճն անիծես.
նորա խաբեցին զիս
քո լուսոյն մօր (?) մերկացայ ես:

3. Պըտղոյն ինձ ուտել տըւին
ւ ի քէնէ արին սեւերեո.
ողորմած ես մարդասէր,
մի անտես առներ ըզմեզ տէր:

4. Իմ տէր այն հողուն եմ ես,
քո ձեռօքդ զիս ըստեղծեալ եմ.
սատանան ցաւեցոյց զիս,
կու խընդրեմ ցաւքս վարատես:

5. Քան ըզջուր ճապաղ եղայ,
կաղաչեմ որ զիս ժողովես.
ժողովես ու շիշան լընուս,
քո աջովըտ մատա հարես (դուցէ՛ մատահարես):

6. Իմ տէր կորուսեալ եմ ես
ակընջունեմ որ զիս գըտանես.
անմեղ ի աշխարհս եկի
ու մեղօք կերթամ սեւերես:

7. Անգերծ վտանգի դիպայ
ւ ի քէնէ հայցեմ խալըսես,
աստէնս ի մեղաց փրկես
ւ անտէնին հըրոյն ազատես:

8. Սատանան ետես զադամ,

- ի դրախտին գուռն էր նա կանգնած.
 զերկու ձեռքն յերար իզարկ
 ու ըարկ ըարկ ինքըն ծիծաղեաց:
9. Ադամ զայս պատասխանեաց՝
 զի՞նչ տեսար, քո փառքդ անիծած.
 Թէպէտ դրախտէն հանեցիր,
 չի թողու իմ տէրն ի ձեռաց:
10. Սատանան տեսաւ զՄովսէս,
 արգելեց ու շատ մի իւաց.
 իմ աստուածախօս Մովսէս,
 մեր տէրն է՞ր է մեզ խռոված:
 (2օպ. ԾԹ., Քրիկ).
11. Երբ մեք աշակերտ էաք
 աստուծոյ, ադամ չէր ստեղծած.
 զադամ ի հողուն ստեղծած,
 մեք ի մեր փառացն եմք զըրկած:
 (2օպ. ԾԹ., Քրիկ).
12. Ի յերկնաւորաց դասուց
 սագայէլ զերեսն էր շըրջել,
 ի յերկնից անդունդս իջեր,
 և ի լուսոյն խաւար մընացեր:
 (2օպ. Ժ., միայն Գուչակ).
13. Ջադամ ի դրախտէն հանել
 անառնոց երկիրն ձըգել,
 ամէնքս ենք աւտար եղբայր,
 և անառնոց երկիր ընակել:
 (2օպ. Ժ., միայն Գուչակ).
14. Աւրհնեալ աստուծոյ անուն,
 որ փակած դըռւին է բացեր
 զաշխարհս գեղեցիկ ստեղծեր
 ու չորեք դիմաց բաժաներ:
 (2օպ. ԾԴ., Պուղ).
15. Զհրեշտակն այլ յերկինս դասեր,
 և ադամայ դըրախտն է տըւեր.

զերկեր անիցից զազնոց
վ անասնոց այս տեղ է շիներ:

(2օպ. ԾԴ., ՊԼուզ).

16. Աշխարհս է ի ծով նման,
ով որ գայ անթաց չի մընայ.
այս ծովս ես ի նաւ մըտայ,
նաւըս դնաց որ ես չիմացայ:
(միայն ՊԼուզ).

17. Եզեր մաւտեցեալ եմ ես,
կու վախեմ քարի զիպանեմ.
քակտիմ զիմ աղւոր շինուածս
ու տախտակըս մէկմէկանայ:
(2օպ. ԿԴ., ՊԼուզ).

18. Դաւիթ արքային որդին
սողոմոն զայս մեզ կու հրամէ.
զխրասն իմաստիցըն տուր,
առաւել ըզքեզ կու սիրէ:
(2օպ. ԺԹ., Քրիկ).

19. Թէ անգէտ է իմար մարդոյն
խրատ տառ, նա զքեզ կու առէ.
նա թուր ու դանակ կառնէ,
թէ կարէ նա զքեզ կու սպանէ:
(2օպ. ԺԹ., Քրիկ).

20. Չորս բան առ խըրատ յիսնէ,
որ ամէն աշխարհ հաւանէ.
զայլոց մեզք դու մի քննէր,
զքոյդ երեսիկ մտաւքտ անտիճէ,
(2օպ. ԻԱ., ՊԼուզ).

21. Ձատտուած մօտ ի քեզ դու բեր
ու մահաւտ աւըրն դու յեշէ.
զխրատդ ի սրտիւ տընկէ,
որ աստուած ըզքեզ չի դատէ:
(2օպ. ԻԱ., ՊԼուզ).

22. Յիմ շատ կիւնահին յահէն
զիս երեր ու լացն է առեր.

ուչ ուլ չէ պատճառ եղեր,
չեմ այլոց ձեռօք ես խաբեր:
(2օպ. ԺԵ., միայն Գուչակ).

23. Իմ սըրտիս յաւժար կամքըն
ի ամէն մեղք եմ հանդիպեր.
միոյն հակառակ կացեր
զօրինաց ցանկն եմ պատառեր:
(2օպ. ԺԵ., միայն Գուչակ).

24. Յաշխարհս է ի ծով նման
ու մարդիկ ի ներս կու լողան.
մարմինքս են նաւի նըման,
հոգին դանձ է անապական:

25. Զարթիք զինչ դարնան ծաղիկ
փրթըթին ւ այլվի չորանան,
երանի հաղար բերան
արդարոցն աւուր գալըստեան:

Յովհ. Թադէոսեան.



Ի՞նչ ՍԻՍՏԵՄՈՎ, ՊԵՏՔ Է ԱՆՅՆԵԼ, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԴՊՐՈՅՆԵՐՈՒՄ

(«Ուղեցոյց տարրական ձայնագրութեան».
կազմեց Շահան Սիմոն.)

Վերջերս լոյս է տեսել «Ուղեցոյց տարրական ձայնագրութեան» անունով մի գիրք, որ ուշադրութեան արժանի է չայնքան իւր պարունակութեամբ, որքան կողմնակի կերպով այն խնդիրն արծարծելուն համար, թէ ի՞նչ սխտեմով պէտք է անցնել մեր դպրոցներում երաժշտութիւնը:

Գրքոյկի հեղինակն աշտպէս է պատասխանում. առաջին տարին կարելի է թուանշանական սխտեմով անցնել, երկրորդ տարին՝ Հայկական ձայնագրութեամբ, և երրորդ տարին՝ դժա-